ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱԱՊՁԲ-4/1-1

ք.Երևան 28.12.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Արպանիվ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն, իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և որա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 890 080 (հինգ միլիոն ութ հարյուր ինսուն հազար ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարտադիր վճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ 5 890 080 (հինգ միլիոն ութ հարյուր ինսուն հազար ութսուն) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Կանխավճարի տրամադրումը պայմանագիր կնքվելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 29.12.2017թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Կոյն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արպանիվ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Նար Դոսի 122
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	"Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան" ՓԲԸ,
Հ/Հ 900011144079	Հ/Հ 002-119584-001
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 09209297

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏՆՕՐԵՆ

Ա. ԽԱՆԴԱՍՅԱՆ

AM033846

Հավելված N1
N ՀՄԱԱՊՁԲ-4/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

ՀՀ	Անվանումը	ապրանքային նշանը	Նոմինալ ունակությունը /Ա/ժ	արտադրողի անվանումը	Նոմինալ լարումը/Վ	Լիցքաթափման հոսանքը -18 °C-ի դեպքում ոչ պակաս /Ա EN	ծագման երկիրը	Սեղմակները ըստ ստանդարտի	Չափսերը /մմ (թույլատրելի շեղումը մինչև +/- 5%) Երկարությունը	Լայնությունը	Բաձրությունը (ներառյալ ամրակները)	Բռնակի ձևը	Կափարիչի ձևը	Յուրաքանչյուր տեսակի ԱԿՄ-ի համար նախատեսված ծծմբական թթվի քանակը/կգ
1	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-75	Fire Ball,Vega, K3A	75	ИСТОК+, ДНЕПРОТЕКС	12	650	Ռուսաստան, ՈՒկրաինա	կոնաձև	276	175	190	1P կամ 2P	Միաձույլ	2.7
2	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-100	Fire Ball,Vega, K3A	100	ИСТОК+, ДНЕПРОТЕКС	12	850	Ռուսաստան, ՈՒկրաինա	կոնաձև	353	175	190	2P	Միաձույլ	3.5
3	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-120	Fire Ball,Vega, K3A	120	ИСТОК+, ДНЕПРОТЕКС	12	720	Ռուսաստան, ՈՒկրաինա	կոնաձև	513	189	217	2W	Միաձույլ	4
4	Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-132	Fire Ball,Vega, K3A	132	ИСТОК+, ДНЕПРОТЕКС	12	880	Ռուսաստան, ՈՒկրաինա	կոնաձև	513	175	223	2W	Միաձույլ	4.8

Ծանոթություն:1P- 1 (մեկ) հատ պլաստմասե բռնակ, 2P- 2 (երկու) հատ պլաստմասե բռնակ, 2W- 2 (երկու) պարանե բռնակ:

1. Կուտակիչ մարտկոցները ըստ տեսակների մատակարարել չոր չլիցքավորված վիճակում՝ արտադրության տարեթիվը սկսած 2017թ-ից: Ընթացիկ անհրաժեշտությունից ելնելով, համապատասխան քանակի (պայմանագրով նախատեսված քանակից ոչ ավելի) և տեսակի չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցները մատակարար ընկերության կողմից լիցքավորել և սպասարկել կամ մատակարարել լիցքավորված վիճակում՝ ըստ պատվիրատուի պահանջի, լիցքավորված կուտակիչ մարտկոցների մատակարարման դեպքում ծծմբական թթու չի պահանջվում: Քանակները նախապես համաձայնեցնել ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հետ:
2. Չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցների (յուրաքանչյուր կուտակիչ մարտկոցի համար ըստ վերընշված քանակի) համապատասխան քանակի ծծմբական թթուն մատակարարել համապատասխան 20լ-ոց տարրաներով՝ ըստ ընդհանուր մատակարարվող համապատասխան քանակների, հավելյալ քանակության ծծմբական թթուն կարող է մատակարարվել այլ տարաներով (մինչև 20 լ) :
3. Կուտակիչ մարտկոցների համար անհրաժեշտ երաշխիքային պայմանները:
3.1 Սահմանված կարգով պայմանների պահպանման դեպքում՝ չոր չլիցքավորված կուտակիչ մարտկոցների երաշխիքային պահպանման ժամկետը պետք է լինի 5 տարի, աշխատանքային վիճակի բերված կուտակիչ մարտկոցների երաշխիքային շահագործման ժամկետը պետք է լինի 2 տարի, ժամկետը սկսվում է էլեկտրալուծույթը մարտկոցների մեջ լցնելու պահից, որոնց հաշվառումը տարվում է ՀՀ ՋՈՒ համապատասխան զորամասերում:
3.2 Մատակարարման ենթակա, աշխատանքային վիճակի բերված կուտակիչ մարտկոցները պետք է ունենան նվազագույնը 4 տարի կամ 75000կմ վազք շահագործման աշխատատևողության ժամկետ:
4. Համապատասխան բևեռականությամբ (ուղիղ և հակառակ) որոշ քանակի և տեսակի կուտակիչ մարտկոցներ մատակարարել կամ փոխարինել ըստ պայմանավորվածության՝ քանակները նախապես

համաձայնեցվում են ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հետ:
5. Բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ԶՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, ստորաբաժանման) և մատակարար կազմակերպության մասնագետների անմիջական մասնակցությամբ, այդ թվում ներառյալ վերանորոգում կամ վերականգնում նմանատիպ առարկայով՝ հաշվի առնելով անսարքության պատճառները:
6. Յուրաքանչյուր կուտակիչ մարտկոցի հետ առկա լինի հայերեն լեզվով տեխնիկական անձնագիրը, որի մեջ մանրամասն կերպով արտացոլված լինի կուտակիչ մարտկոցի լիցքավորման կարգը, տեխնիկական պարամետրերը, սպասարկման կարգը՝ մշտապես և ոչ մշտապես օգտագործման դեպքում, չոր չլիցքավորված և լիցքավորված կուտակիչ մարտկոցների երկարատև և կարճատև պահպանման կարգը, էլեկտրալուծույթի ծավալի նվազեցման դեպքում ծավալի վերականգնման կարգը:
7. Ապրանքի որակավորման (գնման առաջարկի ժամանակ, այսինքն երբ մասնակիցների կողմից ներկայացվեն մատակարարվող կուտակիչ մարտկոցի անվանումը/բրենդը, ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում) և ընդունման ժամանակ ներկայացնել մատակարարվող կուտակիչ մարտկոցների գործող ստանդարտների համապատասխանության վերաբերյալ սերտեֆիկատը:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ Դրամ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չափման մ/վ	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	2018թ գնման ժամանակացույց ըստ ամիսների Հունվար
1	կուտակիչ մարտկոցներ (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US75)	հատ	6	24798	148788	6
2	կուտակիչ մարտկոցներ (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US100)	հատ	37	32796	1213452	37
3	կուտակիչ մարտկոցներ (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US120)	հատ	16	51798	828768	16
4	մարտկոց՝ ԿՄ 6US132 (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US132)	հատ	64	57798	3699072	64

Ծանոթություն՝
Նախատեսվում է կանխավճար 100%-ի չափով:
Ապրանքները պետք է լինեն չօգտագործված:
Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:
Գնման ենթակա ապրանքատեսակները չեն հանդիսանում որպես հիմնական միջոցներ:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊՆԿ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արպանիվ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. Համբարձումյան
AM 033841Կ

Հավելված N2
N ՀՄԱԱՊՁԲ-4/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝ (տոկոսներով) Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 29.12.17թ
1	կուտակիչ մարտկոցներ (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US75)	31442180-4/14/2	148788
2	կուտակիչ մարտկոցներ (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US100)	31442100-24/14/2	1213452
3	կուտակիչ մարտկոցներ (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US120)	31442100-25/14/2	828768
4	մարտկոց՝ ԿՄ 6US132 (կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US132)	31442210-21/14/2	3699072

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Արպանիվ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

AM0338464

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-4/1-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ԵՐԵՎԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ GTEMYT170017

ԹՈՂԱՐԿՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2017Թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆԱՅՔ,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ԻՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԴԻՄՈՂ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎԱՌՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒՏԱԿԻՉ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ 2017Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-ՈՎ ԱՄՍԱԳՐՎԱԾ **«ՀՀ ՊՆ ՆՏՈՒ-ՀՄԱՊՁԲ-4/1»** ԵԱՏԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ) ՆԵՐՔՈ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ՝

ՄԵՆՔ՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-Ն, ԴԻՄՈՂԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՍՈՒՅՆՈՎ ԱՆՀԵՏԿԱՆՉԵԼԻՈՐԵՆ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՆՔ ՎՃԱՐԵԼ ՅԱՆԿԱՑԱԾ ԳՈՒՄԱՐ ԿԱՄ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՀՀ ԴՐԱՄՈՎ, ՈՐՈՆՔ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՉԵՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ՀՀ ԴՐԱՄ 5,890,080.00 (ՀՀ ԴՐԱՄ ՀԻՆԳ ՄԻԼԻՈՆ ՈՒԹ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՈՒԹՍՈՒՆ) ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԲԵՆԵՖԻՑԻԱՐ) ԿՆԻՔՈՎ ԿՆՔՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ (ԱՆՁԱՆՑ) ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ԳՐԱՎՈՐ ՊԱՀԱՆՋԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹՂԹԱՅԻՆ ՁԵՎՈՎ՝ ՏԵՐՅԱՆ ՓՈՂ. 66, ԵՐԵՎԱՆ 0009, ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՄԵՐ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԴԻՄՈՂԸ ԽԱԽՏԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՆԵԵԼՈՎ ԽԱԽՏՈՒՄԸ ԵՎ ՍՈՒՅՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ԹԻՎԸ, ՊԱՅՄԱՆՈՎ, ՈՐ ՎԵՐՈ ՆԵՎԱԾ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՑՎԵԼ Է ԴԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ 002-119584-001 ՀԱՇՎԵՀԱՄԱՐԻՆ:

ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԿԱՏԱՐՎԵՆ ՎԵՐՈ ՆԵՎԱԾ ԳՐԱՎՈՐ ՊԱՀԱՆՋԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՀԻՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՆՔ ՍՏՈՒԳԵԼ ՍՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԵՋ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՈՐԵՎԷ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԿԸՆԴՈՒՆԵՆՔ ԱՅԴՊԻՍԻՔ ՈՐՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ:

ՍՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆՑԵԼԻ ՉԷ:

ԱՆԿԱԽ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ, ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՍՈՒՅՆ ԹԻՎ GTEMYT170017 ԵՐԱՇԽԻՔԸ ԿԴԱՐԱՐԻ ՍՏՈՐԵՎ ՆԵՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ ՊԵՍ.
ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ԿՆԻՔՈՎ ԿՆՔՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻ (ԱՆՁԱՆՑ) ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԵՐԱՇԽԻՔԻ ԴԱՐԱՐՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ, ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔԻ ՆԵՐՔՈ ՎՃԱՐՄԱՆ ԵԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԱՌԿԱ ՉԼԻՆԵԼԸ, ԿԱՄ ԱՆԿԱԽ ԵՐԱՇԽԻՔԻ, ՓՈԽՈՒՄՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ԲՆՕՐԻՆԱԿԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ ԱՄԵՆԱՈՒՇԸ 2018Թ.-Ի ՄԱՐՏԻ 12-ԻՆ, ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ՝ ԺԱՄԸ 16:00 -ԻՆ:

ՎԵՐՈ ՆԵՎԱԾ ՊԱՀԻՑ ՀԵՏՈ ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ՅԱՆԿԱՑԱԾ ՊԱՀԱՆՋԸ ԿՀԱՄԱՐՎԻ ԱՆՎԱՎԵՐ ԵՎ ՍՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՆԵՐՔՈ ՄԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԵՐ ԵՎ ԲԵՆԵՖԻՑԻԱՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԴԱՐԱՐԵՆ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ ԿՀԱՄԱՐՎԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ, ԵԹԵ ՄԻՆՉԵՎ ԴԱՐԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՉ ՄԻ ԳՐԱՎՈՐ ՎԱՎԵՐ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՉԻ ԵՂԵԼ:

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66
Հեռ.՝ +374 60 655 000 Ֆաքս՝ +374 60 655 501 Կայք՝ www.hsbc.am

HSBC Bank Armenia cjsc
66 Teryan Street, Yerevan, 0009, Republic of Armenia
Tel: +374 60 655 000 Fax: +374 60 655 501 Web: www.hsbc.am

Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում
Գրանցման համար 67

Registered in the Republic of Armenia
Registered number 67

HSBC

ՍՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ Է 2010թ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՄՊ թիվ 758 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ «ՑՊԱՀԱՆՋ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ» ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ԴՐԱՆՔ ՉԵՆ ՀԱԿԱՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ:

ՍՈՒՅՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՆԵՐՔՈ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՀԱՅԵՐԵՆ:

ԲՈԼՈՐ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎՃԱՐՎԱՆ ԴԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ:

«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ ԱՆՈՒՆԻՑ

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԱՂԱՎԱՐԻՉ

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՌԵՎՏՐԱՎԱՐԿԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66
Հեռ.՝ +374 60 655 000 Ֆաքս՝ +374 60 655 501 Կայք՝ www.hsbc.am

HSBC Bank Armenia cjsc
66 Teryan Street, Yerevan, 0009, Republic of Armenia
Tel: +374 60 655 000 Fax: +374 60 655 501 Web: www.hsbc.am

Գրանցված է Հայաստանի Հանրապետությունում
Գրանցման համար 67

Registered in the Republic of Armenia
Registered number 67